ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5579-Ա « 13 » նոյեմբերի 2026թ.

ԴԻՄՈՒՄԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Որոշմամբ լուծվող հարցի նկարագրությունը.

Երևանի քաղաքապետարան հասցեագրված Լևոն Հովհաննիսյանի 2026 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ Դ-119268-26 դիմումի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթների համաձայն իրականացվել է վարչարարություն:

Ուսումնասիրելով Լևոն Հովհաննիսյանի 2026 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ Դ-119268-26 դիմումը, նույն դիմումին կից ներկայացված և վարույթի շրջանակներում ստացված ապացույցները, ինչպես նաև գործին առնչվող բոլոր փաստական հանգամանքները, պարզվել է հետևյալը.

2. Որոշումն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

2026 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ Դ-119268-26 դիմումով Լևոն Հովհաննիսյանը, հիմք ընդունելով «Պատահարների փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնագետի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 30-ին տրված՝ «Շարժական գույքի գնահատման փորձաքննություն իրականացնող մասնագետի» թիվ ԳՆ 26 002ԱՀ եզրակացությունը (այսուհետ՝ Գնահատման եզրակացություն) և նույն ընկերության փորձագետի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 30-ին տրված թիվ ՀՄ. 0005 ԱԱ/Ք հետքաբանական եզրակացությունը (այսուհետ՝ Հետքաբանական եզրակացություն), նույն ընկերության հետ կնքված՝ ծառայությունների մատուցման թիվ 11-26Ա և թիվ 12-26Ա պայմանագրերը, խնդրել է փոխհատուցել 2026 թվականի օգոստոսի 14-ին Երևան քաղաքի Զաքյան փողոցի թիվ 2 հասցեի բակում կայանված՝ «BYD» մակնիշի «37 SJ 845» հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի վրա ծառի ճյուղ ընկնելու արդյունքում առաջացած վնասը, որը կազմում է 1.140.000 (մեկ միլիոն հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ինչպես նաև նշված եզրակացությունների դիմաց ընդհանուրը վճարված 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարը՝ որպես խախտված իրավունքների վերականգնման նպատակով կատարված ծախս:

2026 թվականի մայիսի 14-ին տրված տրանսպորտային միջոցի հաշվառման թիվ AB866242 վկայագրի համաձայն՝ «BYD» մակնիշի «37 SJ 845» հաշվառման համարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է Լևոն Հովհաննիսյանի սեփականությունը:

Նկարագրված պատահարի կապակցությամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչությունից 2026 թվականի նոյեմբերի 9-ին ստացվել է պարզաբանում այն մասին, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2026 թվականի օգոստոսի 14-ին Կենտրոն վարչական շրջանի Զաքյան փողոցի թիվ 2 հասցեում ծառի ճյուղի տապալման վերաբերյալ գրություն, «Թեժ գիծ», «Ակտիվ քաղաքացի» հարթակից տեղեկատվություն կազմակերպությունը չի ստացել, ինչպես նաև նշվել, որ օրեր անց վերջինիս աշխատակիցները այդ տարածքով անցնելիս նկատել են ծառի կոտրված ճյուղ, որը մասնատել և դուրս են բերել տարածքից:

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական բաժնում ստացված ահազանգի կապակցությամբ կազմված՝ թիվ Գ/մ-8654 նյութերում առկա՝ անձին հարցման ենթարկելու վերաբերյալ 2026 թվականի օգոստոսի 15-ի արձանագրության համաձայն՝ Լևոն Հովհաննիսյանը հայտնել է, որ 2026 թվականի օգոստոսի 14-ին ժամը 18:00-ի սահմաններում Երևան քաղաքի Զաքյան փողոցի թիվ 2 հասցեի մոտ կայանված՝ «BYD» մակնիշի «37 SJ 845» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ընկել է ծառի մեծ ճյուղ և վնասել ավտոմեքենայի տարբեր հատվածները:

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2026 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 08/ԼԱ-965 գրությամբ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ նույն կազմակերպության Երևան ագրո օդերևութաբանական կայանի տվյալների համաձայն՝ 2026 թվականի օգոստոսի 14-ին Երևան քաղաքի ցածրադիր վայրերում (Զաքյան փողոց), քամու առավելագույն պոռթկումը գրանցվել է 16մ/վ:

Հետքաբանական եզրակացության «Հետևություն» բաժնում փորձագետը, ելնելով փորձաքննությանը տրամադրված «BYD» մակնիշի «37 SJ 845» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի արտաքին մակերևույթին առկա՝ նույն եզրակացության մեջ նկարագրված վնասվածքների առաջացման բնույթից, չափային մեծություններից և ավտոմեքենայի վրա ունեցած տեղակայություններից, գտել է, որ փորձաքննության արդյունքներով կարող է եզրակացրել, որ դրանք առաջացել են վերևից դեպի ներքև ուղղությամբ ընկնող, տեղաշարժվող կոշտ առարկայի կամ առարկաների հետ անմիջական փոխազդեցության մեջ մտնելու արդյունքում, այն է ծառը կամ ծառի ճյուղը:

Գնահատման եզրակացության «Հետևություն» բաժնի համաձայն՝ գնահատման ներկայացված «BYD» մակնիշի «37 SJ 845» հաշվառման համարանիշի ավտոմեքենային պատճառված վնասի չափը կազմում է 1.140.000 (մեկ միլիոն հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

«Պատահարների փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2026 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված՝ ծառայությունների մատուցման թիվ 12-26 Ա և թիվ 11-26 Ա պայմանագրերի 3.1-րդ կետերով սահմանված՝ ծառայության ընդհանուր գինը կազմող 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարը Լևոն Հովհաննիսյանի կողմից վճարվել է 2026 թվականի սեպտեմբերի 23-ին (հիմք՝ թիվ 003386 և թիվ 003387 վճարման հանձնարարագրերի անդորրագրերը):

3. Որոշումն ընդունելու հիմնավորումները.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու կամ դրանց նշանակության փոփոխման, դադարման կամ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման անհնարինության:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝ գույք՝ անշարժ գույք՝ հողամասերը, անշարժ գույք հանդիսացող ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա, այդ թվում նաև՝ կառուցվող շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1071.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ կառուցապատման ընթացքում այլ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունը կրում է անշարժ գույքի սեփականատերը, եթե չի ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2020 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 6367-2020 գրությամբ տրված պարզաբանման համաձայն՝ օրենքի իմաստով ծառը (անկախ դրա տեսակից) հանդիսանում է, որպես անշարժ գույք, դիտվում է որպես հողամասի պատկանելիք, հետևաբար չի կարող առանձին գրանցվել և սեփականության իրավունքով պատկանում է հողամասի սեփականատիրոջը (քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մաս):

ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 13-ի «Մեծությունների միավորների, չափումների սանդղակների հայերեն անվանումը, նշագրումը, գրելաձևն ու դրանց կիրառման կանոնները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N 1938-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1181-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 5-րդ կետով սահմանված է քամու ուժի սանդղակը, որով «13.9 մ/վրկ – 17.1 մ/վրկ» արագությամբ քամին բնութագրված է որպես «ավելի ուժեղ», իսկ որպես քամու ազդեցության նկարագիր՝ նշված է հետևյալը. «Ճոճվում են փոքր ծառերի ճյուղերը: Ծովի վրա բարձրանում են փրփրող ալիքներ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա/ անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում,

բ/ վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

2026 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ Դ-119268-26 դիմումի հիման վրա իրականացված վարչարարությամբ և դրա շրջանակներում ստացված ապացույցներով հիմնավորվում է Լևոն Հովհաննիսյանի սեփականությունը հանդիսացող «BYD» մակնիշի «37 SՅ 845» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառի ճյուղ ընկնելու հետևանքով առաջացած վնասը փոխհատուցման ենթակա լինելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական բաժնում ստացված թիվ Գ/մ-8654 ահազանգի կապակցությամբ կազմված նյութերը, թիվ Դ-119268-26 հանձնարարականի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչությունից 2026 թվականի նոյեմբերի 9-ին ստացված տեղեկատվությունը, «Պատահարների փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ ԳՆ 26 002ԱՀ գնահատման եզրակացությունը և 2026 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ Հմ. 0005 ԱԱ/Ք հետքաբանական եզրակացությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածով, 1058-րդ հոդվածի 1-ին մասով և 1071.1 հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Լևոն Հովհաննիսյանի՝ վնասը փոխհատուցելու մասին 2026 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ Դ-119268-26 դիմումը բավարարել:

2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ «Պատահարների փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ ԳՆ 26 002ԱՀ գնահատման եզրակացության համաձայն՝ «BYD» մակնիշի «37 SՅ 845» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառի ճյուղ ընկնելու արդյունքում առաջացած վնասվածքների հետևանքով սեփականատիրոջը պատճառված նյութական վնասի չափը կազմող 1.140.000 (մեկ միլիոն հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամը, ինչպես նաև

150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, որպես խախտված իրավունքի վերականգնման նպատակով կատարված ծախս, փոխհատուցել Լևոն Հովհաննիսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

